ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի հունիսի 19-ին

ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Երկրապահ կամավորականը

1. Սույն օրենքի իմաստով երկրապահ կամավորական են համարվում 1989-1994 թվականների ընթացքում՝

1) ոչ պակաս, քան երեք ամիս ընդհանուր տևողությամբ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության մարտերին մասնակցած անձինք, ինչպես նաև մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ վիրավորվելու հետևանքով ~~հաշմանդամ~~հաշմանդամություն ձեռք բերած ~~դարձած~~ անձինք՝ անկախ մարտական գործողություններին մասնակցելու ժամկետից, որոնք՝

ա. եղել են սահմանված կարգով գրանցված կամավորական ջոկատների կազմում,

բ. ընդգրկվել են մարդատար օդանավերի կամ ուղղաթիռների անձնակազմերում և իրականացրել ռազմական գործողությունների գոտու սպասարկում.

2) ոչ պակաս, քան երեք ամիս ընդհանուր տևողությամբ մարտական գործողությունների անցկացման վայրում մարտական գործողությունների կամ դրանցում ընդգրկված անձանց սպասարկում իրականացրած կամ օժանդակություն ցուցաբերած անձինք: